քրդերի եւ թիւրքերի հարստահարութեան ու բռնութեան երեսից:

— Քանի՞ քանի անգամ ճիժ, օղլուշաղ առանք ու փախանք չուն սահմանը, որ անցնինք ոսի հողը ու էլ յետ չդանք. հասանք, սարը բարձրացանք ու էլի յետ եկանք:

— Ինչո՞ւ,— հարցրի:

— Ճա՛նըմ, ի՛նչ ասեմ, մեր դերեզմաններ, մեր ժամ, մեր վանք, մեր սար ու ձոր, մեր դաշտ ու արօտ, զըմմէն մեր յետեւէն կը կանչին, թէ ո՞ւր կ'երթաք...ու արցունքով դարձանք եկանք:

Սա ամբողջ հայ պատմութիւնն է եւ հայ ողբերգութիւնը:

Հապա Շահ Աբբասի անողորմ դաղթը, Առաքել Դաւրիժեցու նկարագրութիւնները, սրտաբեկիչ ու ցնցող: Հապա մեր օրերի տեղահանութիւններն ու դաղթերը. ի՛նչ կսկիծ, ի՛նչ բեկումն, ի՛նչ սուգ:

Կաղմակերպուած ազգը իր մայր երկրի մէջ խորը արմատներ ձգած դարաւոր ծառն է, որ անհնարին է չորթել, տեղահան անել առանց խորունկ ողբերգութեան:

Նորերս Ֆրանսական մի դաւառական խպառ յետ ընկած քաղաքում, մի կորած փողոցում մի ընակարան տեսայ կառուցուած 1619 թուին... Համակ քաղաքակրթութիւնը ընութեան դէմ պայքարի արդիւնք է, եւ հնարաւոր է իբր հետեւանք միայն հաստատուն, նստակեաց առանդական սովորոյթներով հարուստ կենցաղի:

Այսպէս է ամբողջ Եւրոպան:

Փորձեցէք քանդել այս բոլորը, ինչին ձգտում է բոլշեւիզմը, փորձեցէ՛ք խլել եւրոպացի գիւղացուց իր սեփական տունը, իր հայրերի թողած անհամար ժառանգութիւնը, անհնարին է:

Ո՛չ, բոլշեւիզմը մի վատ բոյս է, որ միայն ռուս ժողովրդի անտարբերութեան ու ձանձրոյթի մէջ կարող է աճել:

Բոլշեւիզմը Ռուսիայում, դէթ նրա հասարակ ժողովրդի համար այն ցաւագին դալարումները չի պատճառում, ինչ որ ուրիշ ժողովուրդների, թէկուզ հայ ժողովրդի հոգում: Մեր ամբողջ ցեղական կառուցուածքին, մեր պատմութեանը, մեր ընտանեկան ու ազգային աւանդութիւններին, մեր ներքին աշխարհին, մեր սրտին, մտքին բոլշեւիզմը ոչ միայն խորթ է, հապա եւ բախւում է անասելի թափով եւ անասելի մորմոք ու կսկիծ պատճառում:

Ռուս ժողովուրդի համար բոլշեւիզմը թաքսուած ցարիզմն է. զուր չէ, որ ցարական բեժիմի ամենէն անարդ պաշտօնեաները — լրտես, ոստիկան, բանտապետ, դահիճ, դաղտնի զործակալներ, ամէնքը վերստին տեղ են գտել սովետական բեժիմի տակ եւ վերստին նոյն ծառայութիւնն են կատարում Չեկայի հրամանով, ինչպէս մի ժամանակ կատարում էին ժանտարմական բաժնի հրահանգներով:

Եւ ռուս ժողովուրդը — եւ այս ամենէն յուսահատօրէն նշանակալիցն է — բոլշեւիկեան բեժիմին նայում է նոյն անտարբերութեամբ ու ձանձրոյթով, որով նայում էր ցարիզմին թէ նրա շղթայազերծ կատաղութեան օրերին եւ թէ ճորտութեան խաղաղ տառապանքի տարիներին:

Կարծես ոչինչ չի փոխուել:

Ճորտութիւնն է վերահաստատուած, անուանեցէք «կարմիր ճորտութիւն». արդէն ճորտութեան ջնջումից հաղիւ 65 տարի է անցել. անչուշտ ծերեր կան Ռուսիայում, որոնք ճորտ են ծնուած ու դուցէ պահած են յիշողութիւնը այդ անիրաւ, այդ սեւ օրերի:

Բոլշեւիզմը կարող է բաղխուել ռուս ժողովրդի կրօնական զգացմունքին, եւ ըմբոստութիւն յարուցանել: Սակայն ռուս մարդը շատ պինդ պահելով իր հաւատը, այն թաղել է իր հոգու խորքում. նա այնպէս գիտէ ինքն իր մէջ խորանալ, ինչպէս տեսանք, այնպէս վարժ է անձնատուր լինել իր կրօնական խոհերին, իր հոգու հետ խօսել, արհամարհելով աշխարհն իր չար ու բարիով:

* * *

Եւ սակայն բոլշեւիզմը կոչուած էր առնուազն Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան համահաւասար պատմական մի խոշոր երեւոյթ հանդիսանալ ազգերի կեանքում, եթէ պրոլետարական դիկտատուրայի անունով չընկնէր այն բարոյական, հասարակական ու քաղաքական վայրագ ըմբռնումների վիհը, ուր ահա թրպրտում է անյուսօրէն: Նա եկած էր եթէ ոչ